«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-260-11.05.2022-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ հայտնում է հետևյալը.

2019 թվականին տրված օրենսդրական կարգավորումները նպատակ ունեին մեղմելու իրանական ցեմենտի ցածր գներով ներմուծման ադյունքում ցեմենտի տեղական շուկայում առաջացած խնդիրները և ստեղծելու որոշակի հավասար պայմաններ ներմուծվող և տեղում արտադրվող ցեմենտի համար:

Կարգավորումները մշակելիս Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջնորդվել էր նաև այն տրամաբանությամբ, որ Իրանում սուբսիդավորվող և Հայաստան արտահանվող ցեմենտը կարող էր հանգեցնել Հայաստանի ցեմենտ արտադրող ընկերությունների գործունեության խաթարմանը (ընդհուպ՝ մինչև դադարեցմանը), որից հետո իրանական ցեմենտը գրավելով մենաշնորհային դիրք՝ կարող էր հանգեցնել ցեմենտի տեղական շուկայում գների անցանկալի աճին:

Ուստի, տնտեսության համար ռազմավարական ապրանք համարվող ցեմենտի ներմուծումը որպես լիցենզավորվող գործունեություն սահմանելով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջնորդվել է հավասար մրցակցություն ապահովելու, տեղական ցեմենտի շուկայում ամբողջությամբ ներմուծման կախվածությունը բացառելու և հայկական ցեմենտի արտադրության ոլորտը պահպանելու անհրաժեշտությամբ:

Հաշվի առնելով վերը նշված նկատառումները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը չի առարկում Հայաստան ներմուծվող իրանական ցեմենտի և կլինկերի պետական տուրքի վերանայման առաջարկությանը, պայմանով, որ առաջարկվող պետական տուրքի նոր դրույքաչափերը կապահովեն

տեղական արտադրողների և ներմուծողների համար մրցակցային հավասար պայմաններ:

Այդ իսկ նպատակով, Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է մինչև Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում նախագծի քննարկումը ևս մեկ անգամ ուսումնասիրել ներկայիս դրությամբ (սահմանին ցեմենտի և կլինկերի ներկայումս ձևավորված գների, ինչպես նաև տեղի ունեցող դրամի արժևորման պարագայում) տեղական շուկայում առկա գործոնների ազդեցությունը ներմուծվող ցեմենտի և կլինկերի գնագոյացման վրա, որի արդյունքների հիման վրա ձևավորել վերջնական դիրքորոշում նախագծով առաջարկվող դրույքաչափերի վերաբերյալ: